

3316
1 Հրատարակութիւն Ա. Դուլիանի № 1

ՉԱՐԺԱՇԻ

ՋԱՅԿԱԿԱՆ

ԳԱՌՆԵՐ

(Պատկեր բոսեակների կիանքիլ)

891.99

Գ-28

Ք Ի Ֆ Լ Ի Ս

Տպ. ԷԿՈՆՕՄԻԱ Ա. Մանուկի Յակոբեանց և Որդիք

1909

-6 NOV 2011

231
4.

RUSSIA

RUSSIA



954

№ 1 Հրատարակութիւն Ա. Դաւթեանի № 1

891-29

9-28

ւր

ԶԱՐԳԱՇԻ

ԶԱՏԿԱԿԱՆ

ԳԱՌՆԵՐ


(Պատկեր բոսեականների կեանքից)



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպ. «ԷՊՈՆՈՄԻԱ» Ա. Մահադի-Յակոբյանց և Որդիք
1909

ՀՐԱՏԱՐԱՅՁԻ ԿՈՂՄԻՏ



Լույս ընծայելով Չարքաշի «Ձատկական Գառնե» պատկերը, վերցրած բոսիակների կեանքից, աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել:

Հռչակաւոր Մաքսիմ Գորկին իր հրաշալի ու հոյակապ պատմածքներում առաջին անգամ զրականութեան սեփականութիւն դարձրեց բոսիակների, այդ չորրորդ դասակարգի, ինչպէս անւանել էր մի քննադատ, նիստն ու կացը, իրա անկման պատճառները, նրա ներքին ու արտաքին աշխարհները—մի խօսքով նա հրապարակի վերայ զրեց բուսիակին իր ամբողջ էութեամբ, որը և իր ժամանակին ընդհանուր հետաքրքրութիւն ու ուշադրութիւն գրաւեց ուս հասարակութեան ու ինտելիգենցիայի մէջ ընդհանրապէս և մեր հայերիս մէջ ժամանակահատիկ:

Մենք ունինք հայերէն թարգմանած Գորկու պատմածքներից մի քանիսը: Բայց չենք ունեցել հայ գրող, որը ինքնուրոյն աշխատութեամբ մեզ տւած լինէր այդ կեանքից պատկերներ ու պատմածքներ և դա հէնց միայն նրա համար, որ հազիւ թէ մեր գրողներից համաձայն էին մտնել այդ կեանքից խորթ ու հալածւած շարքերի մէջ, նրանց ուսումնասիրելու ու գրի առնելու ցանկութեամբ, շարքեր՝ որոնք իրենց մէջ դէռ ևս պարունակում են զանազան տիպեր, ձգտումներն ու կենսականութիւններն չ'կորցրած դէմքեր, հետաքրքրական ու խորհրդաւոր անձնաւորութիւններ և այլն . . . :

Գիշերային ապաստարաններում հետաքրքիր այցելուն կարող է հանդիպել և բարձրագոյն կրթութիւն ստացած մարդկանց և ժանկավարժների ու գինւորականների, հմուտ ու փորձած արհեստաւորների, տեխնիկների, նկարիչների, վաճառականների, ացնականների, ուսանողների և այլ զանազան դիրքի ու աստիճանի անձնաւորութեանց, որոնք ընդհանուր անւամբ հասարակութեան օակագնցնէր կոչւելով հանդերձ, այնու ամենայնիւ չեն կորցրել դէռ ևս իրենց մարդկային արժանաւորութիւններն ու ձգտումները և որոնց իւրաքանչիւրի կեանքը այսպէս թէ այնպէս կապ-

րած է մի ախուր խորհրդաւոր ու սրտաճմլիկ պատմութեան հետ: Հեղինակը իմօտօյ ծանօթ լինելով այդ դէժքերի ու կեանքի հետ, տալիս է այդ կեանքից վերցրած յիշիալ պատկերը և հեղինակի սոյն աշխատութիւնը իբրև ինքնուրոյն մի գրւածք, հայկական գրականութեան մէջ մի նորութիւն լինելով յանձնում ենք հայ ընթերցող հասարակութեան ուշադրութեանը:

Հեղինակը ունի մի շարք պատկերներ ու պատմածքներ նոյն կեանքից, որոնք պարբերաբար լոյս կը տեսնեն:

Հրատարակիչ:

ԶԱՏԿԱԿԱՆ ԳԱՌՆՆԵՐ

Աւագ հինգ շաբթի առաւօտեան էր: Չորիքշաբթի երեկոյեան ես ստիպած էի եղել գիշերելու մի քանի ընկերների հետ քաղաքային այգու պահապանի բուզկայում, որը չգիտեմ ինչ մի բարեսրտութեամբ զիճել էր մեր ընկերը և նա ես իր կողմից հիւրասիրել էր մեզ իր շքեղ բնակարանում: Այն, այնտեղ էի գիշերել ու քնել, եթէ միայն դա քնել կարելի էր համարել:

Հոգեպէս ճնշւած, քաղցած փորով, անիծեալ օդու աղդեցութեան տակ, մի կէս ժամ թմրած ու անզգայ դրութեամբ պարկած մնալուց յետոյ, զգաստացել ու սարսափելի տանջանքների մէջ էի գտնուում: Առանց անկողին, առանց բարձ, չոր տախտակի վերայ, սարսափելի ջղաձգութիւնների մէջ, երեակալական հսկար ու մի սոսկալի պատկերներով միտքս կաշկանդւած ու շղթայած, այս ու այն կողմն էի շուռ գալիս սակաւ քունը փախչում ու փախչում էր: Ես մի վարակւած մօր զանգած էի, մի անպէտք դիակ: Դէռ ցուլտն էլ մի կողմից:

Սոսկալի ու սարսափելի էր այն գիշերը, որը պիտի լուսանար աւագ հինգշաբթի: Լուսանար... բայց ուր էր այդ բախտաւորութիւնը, ուր էր այն փրկարար լոյսը, որը մասամբ կը թեթևացներ տանջալից գիշերը, որի մէջ այնքան չարչարեցի ես:

Տանջալից գիշեր... Երբէք երբէք հաւաքում էի իմ մնացած ուժերս, ցրում էի տանջող մտքերն ու պատկերները, աչքերս պինդ պինդ փակում էի, որպէսզի գոնէ եթէ քնել չկարողանամ, գէթ մի անզգայ դրութիւն ստեղծեմ և մինչդէռ մի ըստէ մի վայրկեան թմրութեան աէս մի բան իջնում էր իմ վրայ ու անքնութիւն և ահա յանկարծ կողս թևերիս տակը մի խայթոց էի գցում, որը աւելի սոսկալի էր, քան անքուն մնալը: Անպիտանները հանստութիւն չէին տրալիս:

Այդ պարագիտները, աղքատասէրները, այդպէս էինք կոչուած մենք նրանց, աւելի յանդուգն ու կատաղի են դառնում, երբ լուրջ եւ լինում և կամ խմելուց յետոյ լրջացած, գոնէ այդպէս է թուում քեզ: Նրանք մի տեսակ վրէժխնդրութեամբ լցւած, թէկուզ հէնց արիւնովդ էլ յագեցած, տեսնում եւ յանկարծ զանազան զբօսանքներ ու արշաւանքներ սկսեցին մարմնիդ վրայով յետ ու առաջ աջ ու ձախ և այնքան արագ, որ հազիւ թէ յաջողուում է նրանցից մէկն ու մէկին բռնել:

Բախտի բերմամբ եթէ մէկը ձեռքդ է ընկնում, ինչ զարհուրելի բարկութեամբ ու վրէժ խնդրութեամբ տրորում, ճգնում ու սպանում եւ և նոյն գործողութիւնը միևնոյն միջատի վրայ մի քանի անգամ կրկնում, չհաւատալով որ նա արդէն ոչնչացած, սատկած է: Բայց քանի՞նք են նրանք, շատ են շատ, ոչխարի հօտի նման վխտում են մարմնիդ ամեն մասում: Հաւաքւած շապկիդ ծալքերում, թւերիդ մէջ, մազերիդ մէջ, կարկատանների կարերում և ամեն տեղ, որտեղ նա յարմարութիւն է գտել տեղաւորելու:

Իրանց ընկեր լուսալոյ արդէն սոսկալի է. նրա անբերանութիւնն ու անաժօթութիւնը չափ ու սահման չունի. նրա զբօսանքներն ու արշաւանքները անժամանակ են ու աւելի յանդուգն, վհատեցնող ու յուսահատեցնող. նրանք մեծ դժւարութեամբ են բռնում:

Խեղճ գերմանացի ընկեր Կիւզմանը շատ գեղեցիկ կերպով էր բնաւորոշել այդ զարհուրելի գաղանների յատկութիւնն ու վարք ու բարքը:

Նա ուսեւիէն լեզուն լաւ չիմանալով, երկուսին էլ լու էր ասում—ոուսերէն բլօխ:

Երբ խօսք էր լինում դրանց մասին, նա միշտ կրկնում էր.

— Ахъ это бѣлый блохъ хорошъ, кушать спать, а красивый блохъ не хорошъ, кушать бѣжить...

Այն ընկեր Կիւզմանը կասէր և մինչև լաց լինելու չափ կը ծիծաղէր. ապա թևի ծալքերից մի պարարտը կը հանէր, կը փայփայէր զանազան վարժութիւններ կանէր իր մատների վերայ նրա հետ և ապա յանկարծ տերրորի կենթարկէր:

— Ա՛յ, այսպէս, ա՛յ այսպէս... կ'ը կրկնէր մի քանի անգամ

ու մատների արանքում կճգմէր: Զգիտեմ ռւր է նա այժմ ռւր պիտի լինի. մեծ քաղաքների փողոցներում ու գինեմներում... Բայց որքան լաւ անցեալ էր ունեցել նա, որքան եռանդ ու խանդ կար նրա մէջ է՛ն անիծեալ աշխարհ ինչիւր ասես չկայ քո մէջ: Սակայն և այնպէս իմ տանջանքներն արդէն ծայրահեղութեան էին հասնում... Փորձեցի ծխել բայց մոռացել էի որ ծխախոտ չունիմ: Վերջին ծխախոտը չորս հոգով էինք ծխել:

Իսկ այնտեղ չոր յատակի վրա, իմ երեք ընկերները շատ խորը քնած էին զապիտանը Բագդ—նովը և էլ չգիտեմ ով. Նա ուշ եկաւ, բաւական մութն էր, նկատել չկարողացայ, ձայն էլ չը հանեց որ ձայնից ճանաչեմ, ներս մտնելն ու վայր ընկնելը մէկ եղաւ, այնպէս հարբած էր:

Այն, նրանք իբրեւ թէ քնած էին բայց նա այն կենդանարար և ուժեղ կաղուրդող քունը չէր, այլ և՛ օղու թմրացնող անզգայութիւնն էր, որի մէջ գտնուում էին այդ յոպէսին նրանք:

Այդ երեկոյ նրանք մի միջոցով լաւ խմել էին իսկ սառւումն...

Այն սոսկալի ու սարսափելի տանջանքներին, որոնց եւ մատնւած էի այժմ, նոյնը նրանք պէտք է կրէին առաւօտեան:

Անհաստատ քայլեր սրտի փղծկում, շրթունքների, ձեռների և առհասարակ ամբողջ մարմնի դող, գլխի անզգայ շարժում, ականջների խշռոց, քթից աւելի իւրաքանչիւր մի ականջից կախւած լինելը, աչքերի ուռուցը, յանկարծակի շղաձգումն, պարտադիրների վխտալը, դրա վերայ աւելացնենք առաւօտ շուտով աւոթի կրուշկաներով ջուր խմելը—ահա թէ ինչ էր սպասում նրանց առաւօտեան:

Բանտի կապանքներն, Սիբիրի տաժանակիր աշխատանքները միթէ կարողեն հաւասարել վերոյիշեալ տանջանքների հետ—հէ: Այնտեղ բանտում կամ տաժանակիր աշխատանքներում, մարդու գոնէ միջիթարում է այն միտքը, որ նա մի ինչ որ յանցանքի և կամ թէ մի ուրիշի խաթրու համար դատապարտւած է այդ տանջանքներին, իսկ այստեղ ազատ, ինքն իրեն է մատնում տանջանքների:

Վերջապէս առաւօտեան ծէգը նկատուեց բուրդկայի փոքրիկ լուսամտախից: Շանթահարի նման տեղիցս վեր կացաւ և մի կերպ դուռը գտնելով, բաց արեցի ու դուռն եկայ: Տեղում էր մանրակաթիլ անձրևը և ինչպէս երևում էր ամբողջ գիշերը եկել էր:

Մանուկ զարնան թարմ ու զովարար օդը խփեց ծանրացած ճակատիս և ես անյագօրէն ներս ծծեցի նրան իմ վերաւորւած կուրծքը մի քանի անգամ: Թարմ օդը պահ մի ազդեց իմ շղերիս վերայ, ես մի տեսակ հաճելի թմրութիւն զգացի և կարծես թէ իսկական քունը աչքերիս մօտեցաւ: Բայց ռրտեղ պիտի քնէի: Բուրդկայի խեղտող օդը, խառնւած օդու արտաշնչութեան հետ կանազան ապականիչ հոտերը ի մի խառնւած, վարակիչ ազդեցութիւն էին անում մեզ վերայ:

Մի ամբողջ պետութեան հետ այդ բոլորէն չէի փոխիլ մի մարդու անկողին ու մի մարդու սպիտակեղէն, որը կը պարգեւէր ինձ կազդուրող ու կենդանարար ընդ և ռրքան երջանիկ ու բախտաւոր կրիներէ, եթէ այդ քունը լինէր յաւիտենական, ուր ամեն ինչ մոռացւում է որտեղ ամեն ոք հաւասար է, ուր չկան «եսի», քաճահաճոյքների, կամքի, սրտի, խղճի կաշկանդում և ուր մեռած հասարակութիւնը ազատ ու լիակատար տէր է իր մտքերին, ցանկութիւններին, պահանջներին, թէ միայն նրանք գոյութիւն ունին:

Քուն—ռրտեղ գտնէի ես նրան այդ երջանկութիւնը,

Բուրդկայից մի քան քալ հեռաւորութեան վերայ գտնւում էր մեր ժողովարեղն-այսինքն գինեատունը, իմերէթցի Կօստօյի գինեատունը: Նայեցի, նա դեռ չէր բացւած:

Թուրութիւնս անցնում էր, սակայն և դրա հետ միասին ինչ որ քաղց էի գգում, օր և կէս էր ոչինչ չէի կերել, եթէ չրհաշուենք օդու վերայ ծածած ախ մի քանի կտոր սև չոր հացերը: Այո, չընայելով ստամոքսս պահանջ էր դրում, բայց և այնպէս չէի կարող ուտել, որովհետ օդին սաստիկ հակառակէախորժակին և այդ արդէն մեծ բախտաւորութիւն է: Պահանջող ստամոքսը երբ երևակայել է տալիս քեզ զանազան անուշահամ ու անդարար կերակուրներ, դու չես կարող ուտել նրանց, նախ որ երևակայածդ

կերակուրները չկան և չեն էլ կարող լինել, երկրորդ եթէ մի քաղցը բախտի բերմամբ մի տեղից ձեռք բնկաւ, դարձեալ չես կարող ուտել, որովհետ թունաւորւած ստամոքսդ իր պահանջի հետ միասին անընդունակ է նրանց ներս ընդունելու:

Բերնիդ ու քմբիդ համը բթացել ու անզգայացել են օդու հրաշագործ զօրութեամբ և ամենահամեղ կերակուրները քեզ թւում են մի բոլորովին անպէտք բան և կամ ուղակի ցելա: Պէտք է նրանց համեմեմ թունդ թթւով կծուով, որպէսզի կարողանաս մի քանի պատառ ուտել: Այդ ձեռով ուտելուց յետոյ էլ, դարձեալ չես ազատւում տանջանքներից: Մի երկու պատառ կուլ տալուց յետոյ, մի չտեսնւած քրտինք է երևում վրայդ, որը ուղղակի սոսկալի է: Իրար յետևից նրանք գլորւում են ճակատիցդ, մազերի ծայրերից քթիցդ, սրունքներից միջից, մէջքիցդ, ախանջներիցդ, այնպէս որ կարծես յուլիսեան տօթ ու կիզիչ արևի տակ ես գտնւում, այն էլ Մահաբայի անապատներում, թէկուզ այդ քեզ պատահելու լինի դեհտեմքերի սառնամանիքներից: Այդ դեռ ոչինչ: Քրտինքը իր կաթիլներով մարմնիդ վերայ բնակիչների հանգստութիւնն է խանգարում և անա նրանք զարթնած, սկսում են իրենց կատաղի տրշաւանքները յետ ու առաջ, ա՛յ ու ձախ . . .

Օ՛, սարսափելի է, սոսկալի . . .

Մակայն Կօստօյի խանութը գէն փակ էր:

Մի քար կար ընկած բուրդկայի մօտ: Նստեցի վրան. անձրևը մաղում էր, աւագ հինգշաբթի էր այդ օրը, վաղը չէ միևնօրը թաթախման երեկոյ, յետոյ դատիկ առաւօտ . . . օ՛Ֆ, օ՛Ֆ, ինչպէս չանցան իմ գլխով, ինչ տնցեալներ չպատկերացան իմ առաջ: Կին, երեխաներ, բարեկամ, ընկերներ, ազգականներ մէկ մէկ շարեցան աչքիս առաջ. . . կարմիր ձու, «Քրիստոս յարեալ» ճհայրիկ գատիկ է՝ գառների ձայնը, բոլորը բոլորը եկան ու գնացին:

Բայց ռւր են այժմ նրանք . . . ուն անիծեալ աշխարհ, միթէ այդպէս պէտք է լինէր . . . պէտք է մոռանալ, բայց ինչպէս . . .

Օդին է փրկարար բալասանը, նա է սև մտքերի հեռու վանողը:

Կամքդ էլ է թուլացել, ուժերդ էլ, նրան դիմիր ու միանգամայն թուլացիր, հոգ չէ, ինչ կապիսի աշխարհից:

— Չը՛րբև, լսեց գինետան դռան փեղկի բացումը:

— Փառք քեզ Աստուած, վերջապէս, մրմնացի ես և թոյլ քայլերով դիմեցի գինետուն:

Մի մեծ բաժակ օդին այդ ընկերին և դատիկ էր և թաթախում և հէնց նոյն իսկ աւագ հինգշաբթի, բայց ով կտար ինձ:

Կօստին չէր տայ առանց փող: Նա շատ բարի մարդ էր: Երբ փող լինէր ինքը կառաջարկէր խմել, պատճառաբանելով թէ մի երկու բաժակը լաւ է, գլուխը ցաւը կանցնի, իսկ երբ փող չկար, նա բարի ու համոզիչ խօսքերով կը յանդիմանէր, թէ խմելը լաւ բան չէ, վնաս է, շուտ կմեռցնի, պարալիչ կը դարձնի. ետք ևս: Իսկ մեռք «ընկերներս» շատ լաւ գիտէինք ու հասկանում կօստոյի ինչ և ինչպիսի լինելը, սակայն կարծես թէ մի ինչ որ անխղիւր կապով կապւած էինք այդ մարդու հետ:

Մեզնից մէկն ու մէկը եթէ մի հինգ կոպէկ ձեռք ձգէր, թէկուզ քաղաքի մի հեռաւոր ծայրում, նա պիտի անպատճառ մի կերպ հասնէր Կօստոյի գինետունը, թէկուզ մեռնէր, թուրու-թիւնից վայր ընկնէր, գլուխը ցաւից տրաքէր. մի ներքին պարտականութեան դժացմունքով նա այդ 5 կոպէկը պիտի տար Կօստոյին և մի գաւաթ օդի խմէր:

Մեր բարի Կօստին ունէր և սարսափելի հոտառութիւն ու բացի այդ լաւ հաշւապահ էր:

Երբ «ընկերներս» քնելու համար ցրւում էինք զանազան տեղեր, գլխաւորապէս գիշերային ապաստարանը, նա Կօստին շատ լաւ գիտէր թէ ով փող տարաւ իւր հետ և որքան և եթէ միւս առաւօտեան փող ունեցողը ներկայանում էր առանց փողի, այդ արդէն Կօստոյի համար անտանելի էր. նա նրա հետ չէր հաշտւի, մինչև որ յանցաւորը չ'խոստարար մի երեք օր շարունակ մի մի րուբլի ճարել ու օդու տալ Կօստոյի խանութում:

Աւելի սարսափելի էր երբ երեկոյան մի քանի կոպէկ ունեցողը առաւօտեան քիչ-հարբած խանութ մտնէր, Կօստին նրան դուրս էր վռնդում խանութից, շատ անգամ մի քանի բռունցք էլ շլնեա-կութիւն իջնելով:

— Դուրս, դուրս գնա, որտեղ լակել ես, գնա այնտեղ հանգստացիր, подлецъ . . .

Նա բացի «բոսեակներից» ուրիշ ոչ մի յաճախորդ չունէր, բառիս իսկական իմաստով:

Նա իր վարմունքը արդարացնել դիտէր:

— Այս գինետունը ձեզ համար եմ վարձել, գիւղին ու պատեն-տի փողը ես եմ տալիս, գնացէք փող բերէք, կրկնում էր մեր Կօստին,

Նա ինքը շատ անգամ փողոցով անցնող վստահելի մարդ-կանց մատնացոյց էր անում ու մի քանի բարեմասութիւններով զովելով, բիչ տրամադրւածներին, այսինքն մի քանի բաժակ օդի խմածներին ստիպմամբ ուղարկում էր փող խնդրելու և բոլորս նրան հնազանդւում էինք:

Ահա թէ որպիսի բարեմասութիւններով ու ձիրքերով էր օժտւած մեր բրատ, դեադեան, տփաւարիչ և կամ լոկ անուն՝ Կօստին: Սակայն արդարութիւնը ոտնատակ չանելու և զած չ'ծաղրելու համար և Կօստոյին միանգամայն լիակատար նկարա-գրելու ցանկութեամբ, աւելորդ չեմ համարում աւելացնել, որ նա երբեմն երբեմն իսկապէս քաղցածներին, ախի՛քն նրանց, որոնք մի երկու երեք օր բախտի չափ բերմունքով ոչինչ չէին խմել և ուտել էին ցանկանում հաց էր տալիս և գիտէք ինչ — մի կտոր սև հաց, աղ ցանած վրան:

— Կեր բարեկամ, դա սրտիդ լաւ է, բիչ էլ թթու է, աղիք-ներդ կ'մաքրի, սրտիդ թրթռոցն էլ կ'անցնի, մի մին էլ սառը ջուր խմի վրան, ջիգեարդ կ'հովացնի, կաւելացնէր մեր Կօստոն:

Այսպէս բարի էր մեր դեադեան Կօստոն և մենք գոհ էինք նրանից:

Դանդաղ քայլերով գնում էի դէպի գինետուն: Զգիտեմ ինչու ձեռքս տարայ զրպանս և մատներս շօշափեցին մի ինչոր փողը կոլով բան:

— Միթէ փող է, տէր Աստուած, անցաւ մտքովս. ոչ, ով էր տւել ինձ փողը, ամբողջ երեք օր էր որ ձեռքս ոչինչ չէր անցել: Ծղմարիտ է, իրեք օր առաջ մի բժիշկ բարեսրտութեամբ 1 րուբլի

էր տւել, բայց հէնց իսկոյն և եթ ես նրան ոչնչացրել էի, իհարկէ ընկերներս հետ:

— Վարտիկի կոճակ կ'լինի, յուսախար մտածեցի ես . . .

Մինչ դէռ ես այդ ինձ համար կեանքի ու մահւան խնդրի լուծմամբ էի զբաղւած, մատներս անզգայաբար գրպանումս կոշտ էին շօշափում. մատներս ծայրերն էլ բթացել էին, նրանք էլ անընդունակ էին դառնի որոշելու կոշտի ինչ լինելը:

Ձէի վստահանում դուրս հանել:

Եթէ լանկարծ կոճակ լինէր, ո՞հ յուսախարութիւն, իսկ եթէ փող դուրս գար, է՛հ, այդ երջանկութիւնը Թրբ և Տվ է տւել ինձ, այն էլ արդպիսի կրիտիկական բողբոս:

Վերջին ջիգր փորձեցի և կոշտ բանը հանցի:

— Օ՛հ, երկինք, Աստուած, սրբիր . . . աչքերս սևացան և քիչ էր մնում լինէի . . . տասր կոպէկանոց էր . . . Պի՛ղ սեղ-մեցի ափս մէջ և մոռացած ամեն ինչ և գիշերային տանջանքներ և թուլութիւն և գլխի ցաւ և միջատներս, հաղիւ ներս ընկալ գինեւուն: Բարի լոյսն էլ մոռացայ:

— Շուտ Կօստի լցրու մի մեծը, 10 կոպէկանոցը, ասացի բաւական ինքնավստահ ձայնով:

Սպիտակ հեղուկը լցւեց զաւարթ և ես նրան մի ակնթարթում կլանեցի:

Կօստին 10 կոպէկանոցը վերցրեց, մի քանի անգամ խփեց իր ռեպիւիին, մի երկու խաչ հանեց և ապա փողը ձգեց կասան:

— Եթէ ձեռքդ լաւ լինի, հրեկոյիան մի արաղի դոնալ ես . . .

«Երեկոյեան մի արաղի դոնալիմ» այս խօսքերը շեշտակի մասն ականջս և ես մի աղեկաւոր աղօթք արեցի դէպի Աստուած որ այդ օրը Կօստին լաւ առիւտուր անի:

Հինգ բողբոսէ չ'անցած, ես արդէն թունաւորւած ու անզգայ կերպով նստած էի գլխիկոր գինեւուն մի երկար նստարանի ծայրին և ոչ բուն ոչ արթուն չէի կարողանում հաշիւ տալ եղած ու անցածի մասին:

Որքան տեւեց այդ դրութիւնը չ'զիտեմ, միայն ինձ ուշքի բերեց կապիտանի հաստ ու ուժեղ բազուկները, որոնք իմ թեւերը

քոնելով թափահարեցին և ես խելագարի նման ջղային ցնցումներով կանգնեցի:

— Հ'ը, արդէն խմել ես, է՛հ անխիղճ և մե՛նակ . . .

— Ձէ, չէ, կապիտան. ես խմացրի, խեղճը հիւանդի նման էր, մեղքս եկաւ փող չ'ունէր, պաշտպաննց ինձ Կօստօն:

Սրտիս մէջ անչափ շնորհակալ եղայ Կօստօյից: Եթէ նրա այդ խօսքերը չը լինէին, ես կորած էի: Այո՛ կորած էի, որովհետեւ երբ փող կար, պէտք է նրանց էլ բաժին հանէի, հակառակ դէպքում նրանք ինձ յանդիմանելուց բացի և դուրս կշարտէին ինձ իրենց «ընկերական» շրջանից և այն ժամանակ վա՛յ, ինձ:

Իւրաքանչիւր մէկի փողը բոսեակների մի որոշ խմբի ընդհանրութեան սեփականութիւն է և եթէ ունեցած փողը այնքան չէ, որ այդ խմբի իւրաքանչիւր անդամին գէթ մի մի փոքր բաժակ օղի հասցնի, նա պարտաւոր է պահել, մինչև ուրիշներն էլ կըճարեն և կամ ինչպէս ընդունւած է ասել usquequo կանեն և միացնելով եղածի հետ միասին կ'խմեն: Այդ օրէնքը նրանց իւրաքանչիւր սրբազան պարտքն է և ընկերական կեանքի հիմնաքարը: Ամենածալրահեղ դէպքում, այնէլ ընդհանուրի համաձայնութեամբ մի 5 կոպէկ ունեցողը կարող է ինքը խմել, եթէ նա չափից դուրս թոյլ է զգում և կամ գլուխը վրան չէ կանգնում:

Տեղում էր անձրևը: Մեր ընկերները հետզհետէ իրար յետևից հաւաքւում էին գինեւուն:

Եկաւ յայտնի զբաղար Բապդանովը, դողդողալով սրթսրթալով: Նրա յետևից պատճառաւորաբանական կուրսերն աւարտած Գնեդկովը իր տարօրինակ հագուստով:

Երկու օրէնք որ նա ծախել էր իր մօր վերջին անգամ գնած բոլորովին նոր զգեստը: Այժմեան իր տարօրինակ հագուստը իր զգեստի հետ փոխածը չէր: Նա մի քանի անգամ էր փոխել նոր հագուստի տեղ հին շորավաճառները տւել էին մի քիչ աւելի հինը և մի քանի կոպէկներ աւելորդ, որոնք իսկոյն օղի էին դարձել . . . Ունեցածը փոխել էր անհամեմատ աւելի հին նոյնպէս մի քանի կոպէկ աւելով նրանք էլ էին օղի դարձել . . .

Վերջապէս նոր հազուստը փոխելով ու փոփոխելով նա այժմ հագած էր ֆայտոնշու մի հաստ ու լայն վերարկու, բոլորովին քրքրած, համարեա առանց թևերի և որը իջնում էր մինչև նրա ոտներին ծայրը, անդրավարտիկ չկար, հագին սպիտակ վարտիկ էր, որը ծածկւած էր կառապանի վերարկով, ոտներին մէկը կօշիկ էր, մեկը պատուած կրկնակօշիկ, գլխին մի բորչալուի թուրքի փափախ. մօր գնած 4 ռուբլիանոց շեւապը փափախի էր վերածել և այդ հազուստով մեր սիրելի ու համալսարանական ընկեր Գնեդէովը ներկայացնում էր հոգուստների մի տարօրինակ ցուցահանդէս:

Նա բաւական նիհար մի երիտասարդ էր, ոչ աւել քան 27 տարեկան, փափախը իջել էր մինչև ականջները և դրանով ստեղծել էր մի խորհրդաւոր դէմք:

Քիչ յետոյ ներս մտաւ երբէմն գիմնազիօնի ուսուցիչ Ժարինը, իր նոյնպէս խայտաբղետ հազուստով: Պինդժակը սև էր, միայն թևերի տակ դեղին կարկառաններ կային ձգած, անդրավարտիկը բոլորովին սպիտակ, երկու ծնկներին 5 վերջոկ երկաթեամբ ու 3 վերջոկ լախութեամբ կապոյտ կարկառաններով: Սակայն այդ բոլորը մոռացւում էր, երբ նայում էիր նրա փառաւոր ու խորհրդաւոր միրութիւն, որը սանրւում էր միայն այն առաւօտը երբ երեկոյեան Ժարինը այնքան էլ խմած չէր լինում:

Հետզհետէ գալիս էին և մնացածները. բոլորն էլ առանց բացառութեան թոյլ, դժգոյն, դողդոջալով ու յուսահատ դէմքերով:

Մի քանիսը նստած էին, միւսները անկողնի ու անկանոն անց ու դարձ էին անում խառնութի երկարութեամբ ու լախութեամբ, իսկ Կոստին համարակալի վրայ իր երեկայ հաշիւն էր տեսնում ու փողերը համարում և ապա բաժակների միջի մնացած աւելորդ կաթիլ կաթիլ օդրներով նոր ու լիքը շքեր կազմում:

Կապիտանն էր միայն, որ իր սովորական ուրախ բնավորութեամբ ու սրամտութեամբ երբէմն ընդհատում էր լուսթիւնը ու ծիծաղ յարուցում:

Ներս մտաւ վրացի ընկեր Բերգենովը, փողոցում վայր ընկած կիսատ ծխախոտը բերնէն և դէռ բարեկի խօսքերը շրթունքն. ներին, կապիտանը նրան ընդհատեց...

— Տուր ինձ ծըխելու:

Բերգենովը մի վերջին անգամ անյադարար ծուխը կուշտալուց յետոյ, մնացածը մեկնեց կապիտանին և մինչդէռ կապիտանը ծխախոտը բերանը կ'տանէր, ընկեր Բազդանովը մօտեցաւ կապիտանին ու խնդրեց որ իրեն բաժին պահի:

— Идй я брощу, աւելացրեց նա:

Պէտք է ասած որ ծխախոտը օդի դէր էլ է կատարում ծանրացած գլուխների համար և որքան թունդ, այնքան լաւ, չէ որ նա էլ թոյն է պարունակում:

Լուռ էին ամենքը: Ժարինն ու Գնեդէովը նստած երկար նստարանի ծայրին ննջում էին:

— Ինչի՞ էք նստել, ի՞նչու չէք գնում մեր գործին, ով կրքերի մեզ փող կամ օդի կ'տայ, ընդհատեց լուսթիւնը կապիտանը:

— Ուր էարել: Է գնալ այսպիսի վատ եղանակին, որ աղան, կամ չինեմիկը հիմա տանից դուրս կ'գայ, որ կարելի լինի մի քանի կողէկ պոկել, ցուրտ է, ցուրտ, շնչաց Բազդանովը:

— Ցուրտ է ցուրտ... չի էլ ամաչում, չես մտածում թէ գլուխդ հազար փութ է, նեարդերդ փչացած ջութակի լարեր. հեղնեց կապիտանը, ապիւր, եթէ տաք լինի կ'գնաս որսալու...

— Կ'գնամ, ի՞նչ արած, պէտք է գլուխներս սաղացնենք...

— Ա՛հ հագիր և բարի ճանապարհ, ա այց կապիտանը և անմիջապէս հանելով իր վերայից երկար ու սև խալաթը մեկնեց Բազդանովին: Բազդանովը հազաւ սև խալաթը, որը իջնելով մինչև նրա ոտները ծածկեց և որի մէջ նա նման էր գիշերայինմի դադհուրի ուրուականի:

— Ո՛վ է ինձ հետ ընկերանում, դարձաւ նա դէպի ընկերները:

— Ե՛ս, լաւեց Բերգենովի ձայնը:

— Ու՛ր, կամ ո՛րտեղ...

— Դու Փօթովինսկի, իսկ ես դէպի Միքայիլեան պրօսպեկտը, ապա կամուրջով այստեղ, Ի՞նչ մէկ ե'լիւ երե'ք մօրը...

Նրանք դուրս գնացին:

— Բարձր ճանապարհ, շուտ վերադարձ. մաղթեցինք մենք:
— Անխիղճներ, պարագիտներ, ա՛յ իձեալներ, միպապիրոսն՝ անգամ մերժեց, բարկացած ու կատաղած ներս ընկաւ Վալօդեան, անձրև-
փց բոլորովին թրջած, շուն շանողի, չէ՞ որ դու խոստացել ես եր-
բէմն երբէմն ինձ մի մի. երեք կողէկանոց պապիրոս տալ . . .

— Ով, ինչ է, ինչու ես բարկացել . . .


— Այ այն լիրբ գործարանատէր X ը, անցնում էի, ներս
մտայ, պապիրոս խնդրեցի և փոխանակ իւր խոստացած պապի-
րոսը տալու, մի հատ, հասկանում էք, մի հատ ուզեցի նա էլ
մերժեց, բարկացած եմ ասում է, կորիւր հայդէ լիրբ պարագիտ.

— Ինչու ես զարմանում ու բարկանում, հարուստ է կարող է
բարկացած լինել, ասաց ուսուցիչ Ժաւրինը, որ այդ ձայնի վրայ
զարթնել ու աչքերը տրորում էր:

— Հարուստ է, կարող է բարկանալ, ճշմարիտ ես ասում պ Ժա-
ւրին, խօսքը քոնն է բայց մի մոռացիր, որ 17 տարի շարունակ
աշխատել եմ այդ նզովեալ գործարանում, նա իմ վերջին հիւթն
ու ծււծն է քսմել, ա՛յ, մինչև հիմա էլ կրծքիս ոսկորը ցաւում է
վերջին խօսքերի հետ նա մի քանի անգամ բռնեցելով խփեց կրծ-
քին, արիւն է դալիս արիւն և իմ 17 տարւայ աշխատանքի վարձը
նա եղաւ, որ դուրս շարտեց ինձ իբրև մի անապատ փալատ, ի՞նչ
է մի քանի անգամ հարեցի և ի՞նչ, միթէ այնքան մեռած է նրա
խղճը որ 3 կողէկանոց պապիրոսն էլ խնայի, օ՛ աշխարհք, օ
մարդիկ, լիրբ անխիղճ պարագիտ . . . տուր մի կրողկա շուր
հետն էլ մի քիչ քացախ խառնի, դեադեան Կօստի, սիրտս այրւում
է վերջացրեց խօսքը Վալօդեան.

— Դու էլ ճշմարիտն ես ասում Վալօդեա, բայց որ նա հա-
րուստ է, դու աղքատ, ա՛յ խնդիր դրանումն է, ի՛նչ կարող ես ա-
նել . . .

— Ինչ կարող եմ անել, համբերիր քիչ խելքս գլուխս գայ, ես
այդ վիրաւորանքը չեմ տանի ու չեմ մոռանայ. ճշմարիտ է, ինչ
կարող եմ անել, բանդարկել չեմ կարող, դատի կանչել նոյնպէս
փեմել դաձեալ, բայց սպասիր Վալօդեան լիմար չէ, նա վրէժխն-
դիր կ'լինի, թէկուզ դրա համար ինձ բանտն էլ տանեն, կախա-
ղան հանեն, համբերիր քիչ գլուխս թեթեւանայ . . .



— Համբերում ենք համբերում... բայց դու անբարեգործ ես, մի
մոռացիր որ այսօր առաջ-հինգշաբթի է, ապա թաթախման երե-
կոյ, կիւրակի դատիկ, զիտես դատիկ, Քրիստոս յարեաւ, աւելա-
ցրեց Գնեդկովը, որը նոյնպէս զարթնել ու լսում էր խօսակցու-
թիւնը:

— Ի՞նչ պիտի անենք, շաբաթ երեկոյեսն ապաստարանում
քաղաքային վարչութեան փշրանքներով մի կտոր ձուկ, մի քիչ էլ
երշիկ կուտենք, վերան էլ երևի մի մի բաժակ գինի, փառք
կտանք մեր Քրիստոսին. որը դէռ չի եկել, ուրեմն և յարութիւն
չի առել, զիտէք, եկած Քրիստոսը մերը չէ, նա հարուստների,
հոգևորականների բիւրօկրատիայի և այլ պարագիտների Քրիստոսն
է, նրանք նրա անունով ինչ ասես անում են . . . մեր Քրիստոսը
պէտք է բոսեակ լինի:

— Լաւ, չէ՞ որ եկածն էլ աղքատ մարդու որդի էր, ընդմիջեց

Գնեդկովը:

— Այ՛ն աղքատ մարդու որդի էր և հէնց աղքատների
համար էլ եկաւ, բայց նրան հարուստներն ու իշխանները որսա-
ցին, իսկ եթէ նորը գայ, այն ժամանակ մեզ համար կ'գայ,
պատասխանեց ծովագնացը:

— Ճիշտ, պ ծովագնաց, եթէ մի նոր Քրիստոս գայ, ինչ
կ'խնդրէիր նրանից, հարցրեց կէս ժպտով Ժաւրինը:

— Ի՞նչ պիտի խնդրէր հաւասարութիւն եղբայրութիւն, աղա-
տութիւն, սահմանադրութիւն և այլ այսպիսի սօցիալական մտ-
քեր, պատասխանեց Գնեդկովը:

— Է՛հ, յիմարներ, ճիշտ է մէկդ ուսուցիչ է միւսդ լեզւագէտ,
բայց դէռ շատ անփորձ էք, կեանքը լաւ չէք ուսումնասիրել, այդ
խօսքերը դարդակ բանիւր են և բացի այդ անիրագործելի՝ որքան էլ
երազ ես դրանց հասնելու և հէնց ի՞նչ հասնես էլ, հաւատացէք
որ գալիք սերունդը դարձեալ կ'ոչնցացնի կ'սորոտակի քո ձեռք
բերածը և գուցէ այնպիսի արգելքներ ու խոչնդոտներ ստեղծի.
Եր նրան նորից հասնելու համար այնպիսի նեղութիւնների մէջ
ընկնես, որ այսօրւան քաջածղ գրօյի հաւասարի:

Արճիճի ծանրութեամբ մի ծանր ախ դուրս թռաւ Գնեդկովի
կրծքից:

— Հնա, գիտես ես ի՞նչ կը խնդրէի նոր Քրիստոսից, շարունակեց կապիտանը մօտենալով լեզւադէտին, այնպիսի բան, որ մեզ բոլորիս յաւիտեան բաւական լինի . . .

— Հետաքրքրական է իմանալ . . .

— Ես նրանից կ'խնդրէի, որ նա ինձ սովորցնէր ջուրը գինի կամ օղի շինելու արհեստը, օ'հ, օղի օղի, ЭТО ПРОСТО МОИ СЛЕЗЫ, ասաց կապիտանը և ձեռքերը խաչաձև մօտեցաւ օղու փոքրիկ տակառին ու սկսեց գլուխը շարժելով անթարթ նայիլ տակառին, այնպէս ինչպէս մոյկաճկ կրօնաւորը նայում է սրբոց պատկերներին. ԸՆԴ, ЭТО МОИ СЛЕЗЫ, МОИ СЛЕЗЫ, օ'հ, Կօստի, չգիտես թէ ինչպէս օղու մի կաթիլը հաւասար է իմ աչքերից թափւած իւրաքանչիւր մի կաթիլ արտասուքին:

Մովազնացի վերջին խօսքերը մի դառն ծիծաղ առաջ բերելուց բացի թախծալի մշուշով պատեց բոլորի ղէքերը:

— Օղի ԸՆԴ, շնչաց Գնեղկովը և ծանր ախ քաշեց:

Տխուր էր միայն Վալօդեան: Նա մտածում էր:

— Լաւ լեզւագէտ, դու ի՞նչու պիտի մտածես թաթախման երեկոյի մասին տուն ունես տեղ ունես, մայր ու ազգական, կ'ըզնաս տուն և փառաւոր կերպով զատիկ կանես, դիմեց կապիտանը Գնեղկովին ծիծաղեց յետոյ:

— Տուն կ'ըզնամ, ի՞նչպէս այս գեղեցիկ մունդիրով, կարճը եմ միթէ այսպէս ներկայանալ մօրս . . .

— Լսիր, շարունակեց ծովազնացը խփելով Գնեղկովի ուսին, այժմ հէնց ամենայարմար ժամանակն է տուն զնալու, թէկուզ հէնց այս րոպէիս, այս երեկոյ, հնա, զնա մօրդ մեղայ եկ, մի քանի քրիստոնէական ու բարոյական քարոզներ կարդայ, դու հօլաւ ես խօսելու մէջ, մայրդ ծերունի է, նրա բարոյական ու կրօնական ղգացմունքներից պի՞նդ բռնիր, ասիւր որ քրիստոնէութիւնը կայանում է ներողամտութեան մէջ, իսկ յետոյ զղձման, լաւ հսակացիր խօսքերս, խոստացիր որ էլ այսպիսի կեանք չես վարիլ, մարդ կ'իլնիս մարդու նման, ապացուցիր որ սխալւած ես և այլ խօսքեր . . . Մայրդ էլ կին է, կրօնասէր, բացի այդ ծնողական ղգացմունքների տէր, կ'խղճա և նորից մի ձեռք նոր հագուստ կ'գնի . . . —

— Այնուհետև դու էլ մի քիչ լաւ կ'ապահես քեզ մինչև չորեքշաբթի, ԿՅ կամ եթէ կշտապես ու համբերութիւն չես ունենալ, երեքշաբթի առաւօտեան կգաս այս տեղ, այս սրբավայրը, Կօստին զատիկ շնորհաւորելու համար մի կէս շիշ օղի բաց կանիչ կխմենք, կը բարեմաղթենք և ապա հանգիստ հոգով կըզնանք Սօլդատսկի բազարը և համոզւած եղիր որ դու նորից կրկերպաբանափոխես միայն ամարային տարազով. նորերի դրամները գրպաններս կ'ընենք—այսինքն Կօստօյի գրպանը, որի փոխարէնը կ'իլնի իմ արտասուքները, ԵՄԵ, МОИ СЛЕЗЫ, չէ, պարոններ վատ եմ ասում, դարձաւ նա միւսներին:

— Ախր սա առաջինն ու վերջինը չէ, քանի անգամ է այսպէս եղել, քանի անգամ խեղճ մայրս ներել է, ի՞նչպէս զնամ, խեղճւած ձայնով հազիւ շնչաց Գնեղկովը և երկու կաթիլ արտասուք գլորեց նրա աչքերից:

— НУ ПУСТЯКИ, եթէ առաջինը չէ, թող վերջինն էլ չը լինի այս մէկը այսպէս կանենք, յետոյ՝ Խեշտ է, հնա դիտեմ առանց սրբան չես կարող գնալ, այս խօսքերի հետ նա մատների ծայրով խփեք կոկորդին, խոստանում եմ վաղը առաւօտեան մինչև վայր ընկնելդ հարբացնել . . .

— Այո այն ժամանակ համարձակ կարելի է գնալ . . .

— Էհ . . . բայց իմ որսորդները ուշացան, ասաց կապիտանը, դուրս եկաւ փողոց, նայեց այս ու այն կողմը ու դարձեալ ներս գալով, ձեռները իրար շփեց, նայեց տակառին. ԵՄԵ МОИ СЛЕЗЫ, МОИ СЛЕЗЫ ցուրտ է, ցուրտ, մի թէ մի բան բերէին . . .

Վալօդեան, որ այդ խօսակցութեան ժամանակ լուռ ու մտախոհ նստած էր ու չէր միջամտում նրանց ոչ խօսակցութեանը և ոչ ծիծաղին, յանկարծ շանթահարի նման տեղից կանգնեց մի ինչ որ զանձ գտածի նման մօտեցաւ կապիտանին և նրա առաջը ուղիղ կանգնելով ասաց.

— Ասիր կապիտան, ինչպէս անկեղծ ընկեր, դու ինձ հետ համաձայն եմ . . .

— Ի՞նչու, օղի խմելում . . .

— Ոչ, եթէ կախաղան տանեն ինձ կգամ . . .

— Կգամ, մեռնելուց աւելի լաւ բան կ'այ . . .



— Զուրն ընկնեմ նոյնպէս . . .
— Ասենք հիմա քիչ ցուրտ է, ԵՄ կգամ յետոյ . . .
— Չէ անկեղծ եմ ասում, խօսք տալիս ես ամեն դէպքում ընկերանալ ինձ հետ . . .

— Խոստանում եմ . . .

— Աղնիւ խօսք . . .

— Աղնիւ, միայն եթէ միտնելու ենք, սպասիր զատիկն կանցնի, Գնեղկովի նոր հագուստը օղի դարձնենք յետոյ . . .

Վերջին խօսքերը Վօլօդեան չըլսեց, նա խելագարի նման դուրս նետուեց փողոց ու անյայտարաւ:

— Ի՞նչ է խելագարուեց շնչաց, Ժարինը:

— Երևի բէլի գօրեանչկայ է, աւելացրեց կապիտանը:

— Ո՛չ նա սաստիկ բարկացած ու յուզւած է պատասխանեց Գնեղկովը:

Մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ Վօլօդեան ձեռքին մի փոստի թուղթ ու ծրար, որոնց գնելով փոքրիկ սեղանի վրա դիմեց ընկերներին:

— Ապա, տղերք, հանէք ով լաւերն ու չաղերն ունի, ես պէտք է նրա հայրն անիծեմ, նա ինձ պապիրոս չտայ, ասաց ու շապկի կուրծքը բաց անելով, ձեռքը տարաւ դէպի շապկի թևերի տակը:

— Ինչ հանենք, հարցրեցին բոլորը զարմացած:

— Ինչ, իբրև թէ չգիտէք, նրանցից հանէք որոնց մենք կերակրում ենք, մեր բնակիչները, թող պապիրոս չտայ, վնաս չունի...

— Պարազիտ—միջատնէր . . .

— Այո՛ այո՛ պարազիտ միջատներ, ոճիլ - ոճիլ աղքատասէրներ մեծերը, լաւերը, միայն շուտ քանի դէռ բարկութիւնս չէ անցել:

Վօլօդեան մի պատուած լրագրի կտոր փռեց սեղանի վերայ ու իբր վերայից մի երկու հատ հանելով դրեց թղթի վրան:

— Օ՛, ինչքան մեծերն ու պարարտներն են . . . կապիտան քոնը աւելի պարարտ կլինին, դու նրանց բացի լաւ սնունդ տալուց, պահում ես և լաւ առողջապահական պայմանների մէջ, քո պատմական խալաթը լաւ տաքացրած կլինի նրանց, ասաց Վօ-

լօդեան դիմելով կապիտանին:

— Այո՛ այո՛ ես լաւերն ունիմ, ահա քեզ երեքը, շատ է հարկաւոր . . .

— Հանիր յետոյ ընտրութիւններ կանենք, մանրերը կընչնչացնենք, մեծերը կուղարկենք . . . Վարժապետ Ժարին, նեղութիւն քաշիր և մի քանի հատ էլ դու դուրս բեր, քո միջատները կըթեալ ու ուսեալ կլինին, ուսուցչի արիւն են ծծել, վայելչականութեան հետ աւելի ծանօթ, այ, այստեղ շատ կ'լինի, այս դեղինի ու սևի մէջ, միջի կողմից, լաւ փնտռիր, ասաց Վօլօդեան ցոյց տալով, Ժարինի պինդժակի թևերի կարկատած տեղը:

— Իսկ դու պարոն լեզազէտ անմասն մի մնայ նւէրներէց, դու էլ մի քանիսը հանիր, գիտեմ դժուար է դրանցից բաժանել, բայց կարիքը ստիպում է ինչ արած, քո պարազիտներն էլ լեզուների հետ ծանօթ կլինին, այ, այսֆայտոնչու մունդիրիդ ծալքերում պարարտները կը լինին, ես ցանկանում եմ որ իմ նւէրներս բազմաքեզ ու վանազան դիրքի և աստիճանի լինեն հանիր . . .

Եւ այսպէս ամբողջ մի ժամ նրանք հանում էին իրենց վերայից միջատները ու հաւաքում թղթի վերայ, որոնց շարունակ ու միշտ մատի ծայրով իմի էր ժողովում Վօլօդեան և թոյլ չէր տալիս որ կորչեն և ապա կուսալով թղթի վերայ սկսեց համբել . . .

Մէ՛կ, ե՛րկու, երե՛ք, չ՛որս, սա փոքր է, ուստի և հարկաւոր չէ, սրան պէտք է ոչնչացնել, կամ թէ ի՞նչու, ով ճանաչում է թէ սա իրենն է թող տէր կանգնի, ասաց Վօլօդեան դիմելով ընկերներին:

— Լաւ, լաւ, ես հաշուելիմ, բոլորը 47 հատ է, աւելացրեց կապիտանը:

— Էլ հարկաւոր չէ՞, հարցրեց Ժարինը ծիծաղելով:

— Ոչ, ոչ, մնացածները պէտք է պահպանել բեղմնաւորութեան ու ազագայ սերունդի համար:

Մինչ կապիտանը, Ժարինը, Գնեղկովը և Վօլօդեան հաւաքւած սեղանի շուրջը նայում էին միջատներին, որոնց դասաւորում ու տեսակների էր բաժանում Վօլօդեան սուր ու կծու սրա-

խօսութիւններով և դեռ յայտնի չէր Վօլօդեայի վերջին նպատակը, գինեւորուն ներս մտաւ մի մօտ 60 ամեայ յաղթանակաւ ու պարարտ ծերունի, հագին պատառուտած պինդժակ ու անդրաւարտիկ, գլխին արձաճողի գոյն ստացած մի շեւապ, իսկ ոտներին արնալիսի կօշիկներ, որոնց կրունկները չ'կային ու պատառուտած, այնպէս որ ոտի մսերը երևում էին: Նա քաղաքում մի ժամանակ ամենքին յայտնի գինեւորական ու արիստօկրատիական հագուստներ կարող դերձակ էր, Նավակօվսկի ազգանունով, որին բոլորս իր ծերութեան պատճառով հայր Նավակօվսկի էինք կոչում:

Նա ոչ մէկի հետ ընկերական յարաբերութեան մէջ չէր գտնուում, իր համար փող ճարում ու խմում, ոչ ուրիշին խմացնել գիտէր և ոչ ուրիշի հաշուով կը խմէր:

Նրա աչքերը ուռած էին ընկուզի չափ, իսկ դէմքը փչած տիկ էր դառել: Ներս մտնելով նա դողդոջուն մատներով մեկնեց Կօստուն մի քանի մանր սև փողեր:

— Բաժակ լցնէ՞մ:

— Ոչ լցրու մի ТЕМНЫЙ . . . այսինքն մութը:

Մութ է կոչում նրա համար, որովհետև օդին լցում է ոչ թէ բաժակի մէջ, այլ թիթեղից շինած փոքրիկ չափի և որովհետև չի նկատում թէ նրանով խմողը ինչ խմեց, ջուր գինի թէ օդի, այսինքն ուրիշների համար անբացատրելի մնաց, ուստի և նա կոչում է ТЕМНЫЙ - մութ:

Նավակօվսկին որքան աշխատեց աննկատելի մնալ ու խմելուց յետոյ հեռանալ, սակայն դա նրան չըրաջողեց:

Առաջինը տեսաւ Վալօդեան և բարձր ձայնով ընկնելով ծերունու վերայ ճչաց:

— Օհօ, օհօ, հայր Նավակօվսկին տեծանին շուռ տուց . . .

— Օհօ օհօ, ձայնակցեցին միւսները

— Հայր Նավակօվսկի, հանաքը մի կողմը մնայ, դու անպատճառ չինական տեսակի միւրիսներ կունենաս, չէր կարելի մի քանի հատ տայիք անհրաժեշտ են . . .

— Չեմ հասկանում քեզ որդեակ Վալօդեայ, ինչ է քո պահանջը, օդի խմացնելու փող չունիմ, այն էլ պահել էի որ առաւօտ-

դան գլուխս առողջացնեմ . . .

— Ունենաս էլ չես խմացնիլ, բայց դուք թողնե՞ք, ես միւրիսներ եմ ասում, գուցէ Պեկինի, Նանկինի և կամ Կանտօնի . . .

— Ես ոչ Պեկինեմ տեսել և ոչ Նանկին, ինչ է ուղածդ ասիր:

— Դու պարարտ ու հաստ մաքդ ես, քո վերայինը շատ մեծ ու իւղալի կլինին, մի երկուհատ տաս բաւական է:

— Ան հասկացայ, թողհանաքը Վալօդեայ, ես յուսահատ մարդ եմ, ես ձեր ջահել արիւնը չունիմ, ահա երկրորդ օրն է որ ոչինչ չեմ կերել, թող գնամ իմ գլխիս ճարը տեսնեմ, աղերսեց ծերունին:

— Թող, թող, նեղութիւն մի պատճառիր, թող գնայ տեծմուս փող ճարի, եկ գործդ շարունակիր, տեսնե՞ք ինչ քաղաքական հարց ես վճռում, պնդեցին միւսները:

Հայր Նավակօվսկին օրը դուրս էր գալիս գինեւորից, Վօլօդեան իսկոյն յետեից վրայ հասաւ և փողոցի մայթի վերայ կանգնեցնելով ծերունուն, նրա լետի կողմից, պինդժակի վրայից մի երեք հատ վերցնելով, ուրախ - ուրախ յետ դարձաւ և խոռոնց միւսների լետ:

— Սրանք էլ Նավակօվսկու կողմից, իսկ դու կապիտան հսկիր սրանց որ չը փախչեն, ես այս րոպէիս կվերջացնեմ անելիքս և միասին կգնանք: Նա խնդրեց Կօստոյից թանաք և գրիչ ու առջարկեց Գնեդկովին նստել, որի առաջ դրեց փոստի թուղթը:

— Ընկեր Կնեդկով, ինչ կասե՞ գրիր . . .

— Ծառադ եմ . . .

— Գրիր . . .

ՈՂՈՐՄԱՇ ՏԵՐ՝

X Կան.

Աչքի առաջ ունենալով, որ ձեր բանտը Վօլօդեայ Պանկովը ամբողջ 17 տարի վայելել է ձեր առատ շնորհներն ու բարիքները և 17 տարի անդու աշխատելուց ու թոքերը փչացնելուց յետոյ առատ վարձատրութեամբ արտաքսել է —

Աչքի առաջ ունենալով, որ այդքան տարիների ընթացքում մանաւանդ գործարանից վճարելուց յետոյ, սոսկ քաղաքավա-

րական ու երախտագիտական զգացմունքներից դրդւած, ես միջոց ու հնարաւորութիւն չեմ ունեցել գէթ իմ շնորհակալիքը յայտնելու ձեզ որի համար ես ինձ սաստիկ միջաւորւած եմ ըզգուծ և ձեր առաջ պարտազանց ու ապերախտ, —

Եւ վերջապէս աչքի առաջ ունենալով մօտակալ դատական տօները, որոնք ինձ միջոց են տալիս իմ երախտագիտութիւնս յայտնելու, այսու խնդրում եմ, Ողորմած տէր, լինել ներողամիտ և ընդունել ձեր բանտրի կողմից մի քանի չինական ու բուխարական գառներ, ոլորմածութեանդ դատական սեղանը աւելի ես ձոխ ու փարթամ անելու համար: Շնորհաւորելով ձեր Գրիստոսի մեծ յարութիւնը, ի սրտէ ցանկանում եմ ձեզ երկար կեանք, որպէսզի ժամանակ ու դիւրութիւն ունենաք էլ աւելի թշւառներ ստեղծելու, ծծելով բանտրների արիւնը ինչպէս պարագիտ ու նրանց աշխատանքով յագեցնալու ու պարարտանալու որպէս խոզ:

Մնամ ողորմածութեանդ

Խ. Ժ. Վ. Պ.

— Կը արդէն անկարելի է, շեշտեց լեզւագէտը:

— Թող իսէր Աստուծոյ, նա ինձ պապիրոս չտայ, ես գիտեմ իմ անելիքս, մո ծրարի վրայ էլ գրիր:

Վալօդեան հաւաքած միջատները լցրեց գրւած թղթի մէջ ու այնպէս ծալից, որ նրանք գուրս չգան դէպի ծրարը, ապա նաժակը դրեց ծրարի մէջ փակեց ու դիմելով կապիտանին առաց

— Ա՛յժմ գնանք կապիտան . . .

— Ինքդ ես տանելու թէ ուղարկելու ես . . .

— Ո՛չ, ինքս անձամբ կը տանեմ մագաղինը և անձամբ էլ կը յանձնեմ իրեն. թող կարգայ, նայի, տեսնեմ ի՞նչ պիտի անի ինձ:

— Իսկ ես ճրտեղ պիտի լինեմ, . . .

— Դու էլ ինձ հետ ներս կըգաս:

— Եթէ երկուսիս էլ բանտարկեն. . .

— Ոչինչ, գնանք, չէ՞ որ խօսք տւեցիր ինձ հետ թէկուզ կախաղան գալ . . .

— Ցուրտ է ցուրտ, շնչաց կապիտանը երկչոտ ձայնով: Այո, կապիտանը իր խալաթը Բագդանովին տալով, ինքը մնացել էր միայն մի շապկով:

— Գնեղկով հանիր կառապանի մունդիրդ, շուտ կը վերադադնանք, դիմեց Վալօդեան:

— Բացի ցուրտը, ախր ամօթ է այսպէս նստել . . . շնչաց Գնեղկովը:

— Ոչինչ, մեզ համար ամօթ չկայ, հանիր . . .

Գնեղկովը հանեց իր վերայի վերարկուն, իսկ ինքը մի շապկով ու քրքրւած վարտիկով կուչ եկաւ դինետան մի անկիւնում ու մնաց անշարժ:

Այդ արդէն չափից դուրս է, նկատեց Ժարինը:

— Է՛հ, իրենք գիտեն, շնչաց Գնեղկովը:

Չանցաւ կէս ժամ, երկու քաղաքապահներ Վալօդեային ու կապիտանին շրջապատած տանում էին երրորդ քաղաքամասի ոստիկանատունը: Մինչդէռ մենք զանազան ենթադրութիւններ էինք անում ու եզրակացութեան գալիս, խելագար ծիծաղով բռնւած ներս ընկաւ կապիտանը, որը մի կէս ժամ չէր կարողանում ծիծաղից հանգստանալ, որպէսզի մեզ պատմէր դէպքի էութիւնը:

Վերջապէս նա պատմեց, որ նաժակը տարանք, ներս մտանք, ողորմած տէրը մագաղինումն էր, Վալօդեան յանձնեց հէնց իրեն, նա էլ ստացաւ և ապա երբ նաժակը բացեց ու թեք պահեց որ կարգայ, անպիտանները իրար յետևից վայր թափւեցան հէնց իրեն պարոնի առաջ:

Շփոթւեց, կատաղեց, գոյն աւեց, դեղներ և իրեն կորցրած գօրօգօյ կանչեց և հազիւ կարողացաւ հասկացնել նրանց թէ բանն ինչումն է և թէ որքան վերաւորանք ենք հասցրել ողորմած տիրոջը մենք անպիտաններս:

Յետոյ, ինչպէս տեսաք մեզ տարան պրիստաւի մօտ: Նա էլ կատաղեց, բարկացաւ, յանդիմանեց ու հրամայեց գուրս վռնել մեն:


— Իսկ ինչ եղաւ Վալօդեան, հարցրին ընկերները:


— Նա ներս սողաց բռնաւորներ խուցը, դուռը բաց էր, ասելով որ ինքը անքուն է, տեղն էլ տաք, քիչ քնելուց յետոյ կ'գամ:

— Ուրիշ ոչինչ . . .

— Ոչինչ իրաւ որ լաւ զատկական գառներ էին եղած, կեցցէ Վօլօդեան, սակայն ես էլ մի նւէր ստացայ պրիստաւից ապտակ է՛ն բուրժուի, բուրժուի, կրկնեց կապիտանը և սրտի խորքից մի կուշտ ծիծաղեց . . .









ՀՀ Ազգային գրադարան



NL0347928

49083

Գրքն է 10 Կապէկ:

Тифлисъ Въ Книжный магазинъ „Гуттенбергъ“.

Կամ հրատարակչին՝ Тифлисъ, Мельничный пер. д № 5